2020 թվականի կարանտինյան հերթական կրկնվող օրերից էր՝ ոչինչ չանելու տրամադրությամբ ու անորոշության անտանելի զգացողությամբ:

Սոցիալական ցանցերից մեկում անցկացրած շատ ժամերից մեկը արդյունավետ դարձավ: Հանդիպեցի նոր սկսվող հայկական առցանց կրթական հարթակի գովազդի, որը փնտրում էր հայ դասավանդողների՝ արտերկրում ապրող հայերի հետ աշխատելու համար: Այբեցու հետաքրքրությամբ ու համարձակությամբ որոշեցի դիմել, չնայած որ չունեի որակավորում և մի քանի տարվա փորձիս մասին վկայող որևէ փաստաթուղթ:

Անցա հարցազրույցը, և կովիդյան ձանձրալի առօրյան վերածվեց նոր ու հետաքրքիր փորձառության՝ արտերկրում ապրող հայ երեխաների հետ շփվելու, նրանց այլ լեզվով գիտելիք փոխանցելու, հայերեն սովորեցնելու ու հաճելի ծանոթություններ հաստատելու:

Այս փոքր հաջողակ դրվագի ամեն կետում դրսևորած հմտությունների, հատկանիշների, գիտելիքների համար շնորհակալ եմ «Այբ»-ում սովորելու և նրա շրջանավարտ լինելու իմ բախտին: Կրթության հանդեպ ձևավորված սերն ու խանդավառությունը, դրա դերի ու կարևորության գիտակցումը, կրթության կրակն ու լույսը փոխանցելու և տարածելու գաղափարախոսությունը ամենակարևորն են, որ տվել է «Այբ»-ը: Ահա սրա մասին է այս պատմությունն ինձ համար:

Երջանիկ եմ, որ ժամանակին ունեցել եմ համաշխարհային մակարդակի լավագույն կրթություն ստանալու, իմ կայացման համար կարևոր երեք տարիներն այբական միջավայրում անցկացնելու հնարավորություն: Իմ սրտանց ցանկությունն է, որ հնարավորինս շատ հայ երեխաներ ունենան այդ հնարավորությունը:

Այբ
Կրթական հիմնադրամ

Այբարար

Այս ցանկության իրագործմանն անհատապես նպաստելը «Այբ»-ին մեր խորին գնահատանքն ու շնորհակալությունը հայտնելու և մարդկային կյանքը կրթությամբ վերափոխելու գաղափարը շարունակելու լավագույն միջոցն է:

«Այբարար» դառնալու և «Այբ»-ի գաղափարը շարունակելու համար միացե՛ք ամսական նվիրատվությունների համակարգին: Ձեր աջակցությունը կուղղվի «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդին:

«Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի սովորում է ուսման վարձի փոխհատուցման՝ կրթաթոշակի շնորհիվ: Կրթաթոշակային ֆոնդը հնարավորություն է տալիս ցանկացած երեխայի, որն ընդունվել է ավագ դպրոց, անկախ ընտանիքի ֆինանսական վիճակից, ստանալու համաշխարհային մակարդակի մրցունակ կրթություն:

Ստեֆանի Հարությունյան
«Այբ» ավագ դպրոցի շրջանավարտ

https://donate.ayb.am